



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Годы

Классификация

1905

891.99

2.29

26 NOV 2011  
EJUS-10, 63

891.542.3  
2-29

(VI)

# ԵՐԿՈՒ ՊԱՏԿԵՐ

891.99  
2-29

(Գուղական եւ գործարանային կեանքից)

Ա. ՋԱՆԵԱՆՅԻ.



ԲԱՔՈՒ.  
ՏՊԱՐԱՆ „ԱՐՐԻ“  
1905.



23.07.2013

51709

891542-3

Զ-31

ւղ.



### ՄԻՆՈՒՃԱՐԸ

3552

Дозволено цензурою 30 Декаб. 1904 г. Тип...

Գիւղը ննջում էր...

Մռայլ, և վիթխարի գեի պէս ինչպէս մի սև ուրաական, յոգնած՝ մրգած կեանքի դաւերից, պարփակւած անհամար վշտի մէջ վիղբ ծուռ, բերանը բաց, օձապտոյտ մէջքը թէր, ընկած էր նա մեծ ժայռի տակ հէնց այնտեղ, որտեղ վերջանում էր դառնվայրը՝ և տեղի տալիս փոքր ու նեղ տափարակին։ Նորա ձախ կողմից կրկնաթով հոսում էր լեռնային մի փոքրիկ գետակ. փրփրուն ու ճերմակ որպէս սարերի ձիւնը, պարզ և անարատ որպէս կուսական վայրի շուշանը։ Հեռու աշխարհային ազմուկներից, կղզիացած իւր մէջ, նահագնական գիւղը գեռ շնջում էր անքայով ցաւերի տակ, կ'ըսւած անմատչելի լեռների ծերպերին.



նորա մէջ դեռ կեանք կար, այտեղ պապական օջաղի ծուխը պալան—պալան դեռ բարձրանում էր վէր, ուր նոյնքան կոյս և ջինջ կթերում մէկը միւսի յետևից վխտում էին հազաբաւոր աստղեր...

Գիշեր էր: Լուսին չկար երկնքում, աստղերի և ոչ մի հետ. այնտեղ թագաւորում էր ամպերի անվերջ կարավանը. յաւիտենական խաւար, գիշերային լուսթիւն, ինչէր չէ պարունակում իւր մէջ: Չայն ծպտուն չ'կար, գետակներ որ բարձր ձորից գահավիժերով, մի տեսակ ջարդվածի մրմունջ էր առաջայնում: Գիւղից բաւականին հեռու, մեկուսացած մի ինչ որ սեռնոց ճրագի շողք էր նկատուում. դա մի տեսակ վերջին թիկ—թակ էր, մի պլպլոց, որ արձակում է հիւանդը հողկարրի ճգնաժամի մէջ:

Տեսիլը դատարկ չէր, նորա կէսը փարդակ պատած էր, որտեղ ըստ երևոյթիւն պահուում էին այդ ալքատ գերգաստանի անային կահ-կարասիները. մնում էր անակի մի երկրորդ մասը, որտեղ հէնց սկզբից դռան երկու անկիւնում գրված էր երկու կողմած կուժ, մի ծալքատեղ թէև դատարկ, և մի հատ կիսավեր պատուհան: Տեսիլ կենդրոնում՝ որտեղ սրբական թսնիրն է, ձգված էր մի գզգզված թա-

ղիք, թագերի վրայ մի աղբտա անկողին, իսկ անկողնու մէջ մի նիհար և հիւանդ պատանի: Պատանին ցաւից նեղւած անդադար տրնքում էր, նորա չուրջը նստոտած էին հինգ, թէ վեց կանաչք կորագլուխ և տխուր: Հիւանդի գլխակերևը ճենճերային հոտով—մխում էր պատմական իշու թրինքը, կտրած կժի կտորի մէջ. պատանուն ըստ երևոյթիւն մուխ էին տալիս գիւղի ծեր, և փորձած կանացի դուխնեքը... և ծուխը շարունակում էր ոլորապտոյտ կերպով բարձրանալ գէպի վեր, այն ինչ ծեր գլուխներն օրորում էին. իսկ հիւանդի տարաբախտ մայրը, չոքած մինուճար բալի ոտերի մօտ, մզկտում էր մի ինչ որ մեղամաղձիկ բայաթի... Լուսթիւնը խորհրդաւոր էր, հարկաւոր էր մտածել, գիւղի բանիբաց գլուխները բոլորը այստեղ էին, էլ ում կանչէր խեղճ մայրը, էլ ում գիմէր. գուցէ այդպէս դեռ երկար շարունակէր, եթէ որ մի ձայն լուսթիւնը չ'խանդարէր:

— Բալաս ի՞նչ կուտե՛ս, — լսեց յանկարծ տարաբախտ մօր ձայնը. հիւանդը թերթեց արտանուշերը, նուազ աչքերը յառեց պահ մի մօր դէմքին, և ապա փակեց:

— Տուր օխշի, էդ եփ եկած սերկիկի ջրից մի քիչ, չես տեսնում որ շրթունքները



ցամարիչ են.—լուեց մի ինչ որ բժշկի հեզի-  
նակաւոր ձայնը. և մնացած երկու կանայք  
մօր օգնութեամբ, համարեա թէ ուժով պար-  
պեցին այդ բաժակը հիւանդի բերանը... Պա-  
տանին ինչ որ շեմ ու շեմ արեց, դժգոհու-  
թեան նշաններ ցոյց տուեց բայց արդէն ուշ  
էր: Անցան մի քանի վարկեաններ, հիւանդը  
սկսեց տաքութեան մէջ գառանցել, նորա դէմ-  
քի մկանները ուռելի և պայթելու մօտ էին,  
այն ինչ հոտով բրտինքի հետ անընդհատ բարձ-  
րանում էր տարութեան գոլորշին:

Բժիշկներից մէկը վեր կացաւ խաշ հանեց  
երեսին, մի քանի սրբերի անուներ տալով՝  
խմբից մի փոքր հեռացաւ, չորեց երեսը դէպ  
աղօթարան, մալը առաւ ձեռքը և սկսեց  
պտտեցնել. (մկրատ էր դցում) կէս ժամից յե-  
տոյ «ախ է ախ» յարանջելով կիներ աւարտեց  
իւր գործը, մի տեսակ հպարտութեամբ մալը  
դրեց մի կողմ և սկսեց.

— Չասացի որ սրբոց է, որ խօսքը ա-  
սում են չէր էլ լսում. ամեն մարդ ձերն էր  
պնդում, բնկաւ մէկը Սուրբ Գէորգ, միւսը  
Աստուածածին, (երեսը խաշակնքելով) ծառայ  
եմ նորա Սուրբ զօրութեանը, ախշի գուք էլ  
երեսներիդ խաշ հանէր. բալքի մի լուս գա  
էջ եթիմի վրան. դարձաւ նա միւս կանանց:

— Ախշի Մարիամ (հիւանդի մայրը) շարունա-  
կեց կիներ—Պու էդ սրբերին խօ պարտական չես.

— Ձէ, կրինեց խեղճ կիներ,—Մեռնիմ  
երկուսի ոտին էլ, երեխաս որ վեր կենայ՝ գի-  
լակով ուխտ եմ անում մի գօշ, և վեց ջուխտ  
մօմ ոտարորիկ, չարեչոք կտանիմ նրանց ոտին...

— Հա, դէ որ էդպէս է՝ մի ջուխտ մօմ  
տար հիմա մեր եկեղեցոյ պատին կպցրու թող  
վառվի, մինչև որ մնացածն էլ կ'տանես. դէ  
նանը քեզ մատաղ շուտ արա. Սուրբը կըխոս-  
վի, էս գիշեր լուս պիտի գնենք... Մինչ այդ,  
մի ուրիշ կին դանակով «ղօթում» էր հիւան-  
դին մրթմրթալով մի ինչ որ աղօթք, չար աչ-  
քից ազատ պահելու համար:

Հիւանդի մայրը վեր կացաւ, նայեց պա-  
տուհանին, ընկաւ բունջ ու պուճախ, բայց  
մոմ չ'գտաւ... նա պահ մի մտածեց—երևի  
ում գիմելի էր որսնում, իսկ այդ գիշեր լուսը  
անհրաժեշտ էր լինչ անէր, սուրբերը կըխոս-  
վէին...

Արդու համար ինչեր չէ տալիս մայրը,  
նորա աչքերը ընկաւ սրբու գունատ գէմքի  
վրայ, և նա շարժուեց... Գը գնա թէկուզ  
գժոխքից, կբերի այդ ջուխտ մօմը, միայն  
թէ իւր որդին լաւանայ...

— Ձէլրան բալաս... Մինուճար լալաս...



Իզիթ աղան... — մըսնչու՞մ էին մօր չըթուներ-  
ները, — կրգնամ թէկուզ կրակի մէջ, կ'ըրեմ  
ըեզ համար ամենայն ինչ... Մո՞տ ու մատուց,  
Խուճկ ու աղօթք... Գեղ ու դարման... Միայն  
թէ օգուլ լաւանա... Միայն թէ դո՞ւն իզիթ  
վեր կենան... Մինչև աշխարհքի վերջը ուտա-  
րորիկ կը գնամ օդու... Հարունակեց նա. —  
Լողմանին կը գտնիմ ջէյրան... և ըիկ համար  
գեղ ու դարման կ'հարցնեմ իմ ջիզանք...  
կըթույնիմ էրգէս... Ռաշտար ջանիդ դուրբան  
բալան... էլ գեղ — դարման չ'ճարէի ըիկ հա-  
մար, էլ լոյման — հարիմ չ'մեաց որ քու տուր  
չ'ըրեի... Գլխիս փողերը բոլորը կտրեցի քո  
թիլիսմիդ վարձի համար, իմ թնդ... — թա-  
գաւոր... Սակայն ո՞չ մի օգուտ... Չուլումը  
երկնից է բալան... Ինչ էիր արել նրան... Ար-  
եկաւ գլխիս էտպէս պինդ բռնակեց... ջան ու  
ջիզեարբը, սիրտը էլ հետը պոկեց ու տա-  
րաւ... Եւ ի՞նչ անեմ որ չ'անիճեմ քոռա-  
նան Աստված... էս մեծ սիւրուի մէջ միայն  
իմ եթիմ գանը տեսար, իմ սրտիս Սիւնը...  
Արին պոկեցիր... Մոռորմ Ստուած... Սուտ  
է Բո գատաստանը, Գու դիվան չունիս...  
Գու Սրբայութիւն ու դժոխք չունիս... Գու,  
որ Բեզ հայր ես կոչուեմ բոլոր խեղճերին, դու  
կենստուտ Աստված... Էնրան աղօթքս ինչու

չ'լսեցիր... Ինչ էի արել Բեզ, որ օրը, որ ժամից  
եւ մնացի... Ո՞ր տէրտերի վարձը կտրեցի...  
Ո՞ր սրբերիդ սառ չ'ըրէչըք մատակ չտարի...  
նր սուրբ հոգերիդ երես չ'լսեցի... Ո՞ր հա-  
րեանիս փխութիւն արի, տան, թէ ճիշտ է  
եկ անչքս հանի... Անջիգհար Ստուած... սոր-  
մութիւնդ պլխիդ խառլ կենան, ինձ երբ կը  
սորմես... պարտական մնան... թախտը ցրիւ  
գայ... Սրատես Աստված անչք քուանայ...  
Քո բալակ էլ թող թոնիրը ընկնի կամ կի-  
ւամ ջրում խաշիլի, չ'մեանի... Սրբերի սոշից  
ես պուկ չի եկայ, դու էի գառել որ բալիս  
խգճան... նորանց էլ չ'լսար և գեպիւնը Աստ-  
ված... Սարի պէս աղամարդիս տարան, չ'կը-  
տացար սրան էլ կուզես... Ա, տար սրանց  
էլ... թէկուզ երկուց երկուսին, սրանց ինչ  
անեմ... (այջկերանց ակնարկելով) Տար ինձ  
էլ կուզես, բայց նրան ետ տուր... նրան...  
և նրան... բէմուրաղ Աստված... Բար է Բո  
սիրտը, Գու հայր չես եղել, Գու չես իմ սր-  
տում մօր գորով ցանել... Մայր եմ, մայր  
Աստված... թող պատուի երկինք, Աստղերքդ  
Արևը թող թափվին գետինը... Գուն էլ ստեղ-  
ծայ... միգա համարանք չեմ փորձի քեզ  
Այստեղ նա կանկ առաւ, երկու ձեռքով  
ամուր բունեց մազերից և քաշեց պինդ, որքան



ուժումը կար... Յ՛շաց բարձր, մի ոտտին գործեց և թուա տուն: Հիւանդը անխոյժ կերպով պառկած էր, շուրթերը դողում էին. նա պահ մի հայեացքը բեռեց որդու վրայ և անցաւ ծալքի յետեր. վեր առաւ մի տալերը բրինձ, (վերջին տալերկն էր, պահել էր որդու համար թ[թու շորվա պատրաստելու) և գնաց դէպի գիւղը մանրավաճառի տունը: Վաշխառուն քնած էր, սևաւոր կինը ծեծեց տան դուռը որքան ոյժում կար, մի կերպով հասկացրեց իւր նեղ դրութիւնը մանրավաճառի կնոջը, իսկ նա մարդուց տուեց նրան իւր ցանկացածը.—Մի քիչ էլ խունկ ն քիւր, էգուց տառը հատ ձու կուղարկեմ քեզ համար, թախանձեց այրին. մանրավաճառի կինը կատարեց այդ ցանկութիւնը ևս աւելացնելով.—չ՛մոռանաս ձուաները բաջի, մարդս կիմանայ և այն ժամանակ վայր եկել է ինձ տարել.—կուղարկեմ ա քիւր, կուղարկեմ արխային կաց, կտրեց նրա խօսքը այրին և դնաց դէպի եկեղեցի:

Խաւար էր շրջակայքը, մի տեսակ կախարդական գաւազան կարծես եկել՝ միացրել էր ամենայն ինչ, կենդանութեան և ո՛չ մի նշոյլ փողոցի մէջ կանգնած այրին գիտեց իւր շուրջը, ձայն՝ ծպտուն չ՛կար. նայեց երկնքին, այնտեղ էլ իւր սրտի պէս սև էր ու

խաւար, ասող ու լուսին չ՛կար... Բնութեան արհաւիրքը ամենուրեք էր՝ նա շարժուեց: Հեռու գիւղի միւս ծայրից՝ լսվեց մի շան ցաւալի կաղկանձոց, և անհետացաւ խաւար լուութեան մէջ. նորան ձայնակցեցին շների մի ամբողջ վոհմակ, այստեղից՝ այնտեղից... ցաւակցութեան մի նշան էր այդ, թէ՛ մի խրախուսանք՝ սրից յետոյ շները արմուկով դիմեցին դէպի այն կողմը, որտեղից լսվեց ցաւալի կաղկանձոցը:

—Նա էլ մենակ չէ, մրմնջաց այրին—  
 նա էլ բարեկամ, ազգական ունի... Միայն ես մենակ... միայն ես տխուր, ցաւագար ու լուս... Գիւղը ամբողջ հանգիստ ննջում է երկնային թագաւոր, միայն ես արթուն, կուրծքս ուռած՝ ցաւերի տակ ճմլված ստրուկ, դիմում եմ դէպի սրբերիդ սուր, մի սղորմութիւն... մի շնորհք արա բարերար Աստված...

Նորա աչքերը թացացան, պէմբը կաս—  
 կարմիր կտրեց, յեծկտանքը խեղդեց նորան, և չ՛կարողացաւ շարունակել ու լուս... ճանապարհին մի քանի անգամ կանգնեց նա, դիտեց երկնքին երկնք—երկնք, ասես մի ինչ որ բանէր փնտռում. իրանց տան կտուրը՝ ուղիղ այնտեղ, ամենայն օր մի ասող էր փայլում, մի մի՛ծ և ճաճանշաւոր ասող... Իւր որդու ճա-



կատայիրք, իւր որդու բնութիւնը, ինչ էլ չկար  
այսօր... Դիտեց երկաթը, պտուեց երկաթը... Զեռ-  
քը մեկնեց՝ կարծես ուզում էր գործանով շրե-  
մել հազմ տեսնու մութ ամպերը, դուրս բերելով  
այնտեղից իւր սիրած աստղիկին, բայց իզուր՝  
ոյժերը գաւաճանեցին նորան, երկինքը հեռու  
էր, իսկ աստղիկը չկար ու չկար...  
— Բարանան Աստուծո՛ւ... ճշաց նա— Մի  
ատուղ էր՝ ուրիշի նման խօ տասը բռանով չէր...  
էն էլ խաւրեցրիր... Աչքդ իմ դռանը մնայ միշտ,  
որ մնացել է անկշտում Աստուծո՛ւ... Նա նայեց դէ-  
պի իրանց կտուրը, այնտեղ՝ չղարչ ամպերի  
միջից մի ինչ որ բան պէծին տուեց, փայլա-  
տակեց կայծակի նման, և մի գեղին շողք ե-  
րևան եկաւ հէնց այնտեղ, որտեղ ամենայն օր  
փայլում էր աստղիկը... Նորա մէջ ծագեց յու-  
սոյ մե փորթիկ նշոյլ, զեռ ամենայն բան կու-  
րած չէ մտածեց նա, աստղիկը կար՝ շողքը  
չէր խաբում չէ այդ էլ յոյս է... և նա շարժ-  
ւեց՝ հասաւ եկեղեցուն, վառեց մոմերը, ծունր  
դրեց մէկ... երկու... երեք... Երեսը քսեց ե-  
կեղեցոյ պատին, հոգին... ներդրութիւն խնդ-  
րեց, — ջան Տիրամէր, ներիր ինձ, բարեխօսիր  
ինձ համար... շարունակեց նա — Ես մեղաւոր  
եմ. ես գիժ եմ հա՛ Տիրամէր... Գուն էլ մէր  
ես, ես էլ մէր եմ, մենք երկուքս էլ գիժ մէր

ենք ենք հա՛... Որդուդ համար ինչէր չէիր ա-  
նում Լնչառ... բղաւեց նա, — հիմա ինձ պիտ  
մեղադրես... Ես էլ մայր եմ, չէ՛ ես էլ սրբի  
ունիմ... Իմն էլ աղիզ Տիրամէր... Իսկ էլ  
Միխուճար էր... Երկնքում մի աստղիկ, երկրում  
մին նա էր... Ես էր հա՛ Տիրամէր... Նա-  
խանձեցիր... Ա՛ռ, տար նորան էլ, ինձ էլ,  
թաք դու կշտաց անողորմ... Ես կուշտ եմ...  
Ես քեզ պէս փորումս ինն ամիս չեմ պահել...  
ցաւերով չեմ ծնել... Ես քանի եմ Տիրամէր՝  
դու մէր... Եդ Աստուծո՛ւ ասաց՝...

Նա լուեց:

Գիշերային ոգու պէս հերարձակ, կուրծքը  
բաց, ոտաբոթիկ, մի քանի անգամ շրջեց իւր  
գլխով... Խելագարի նման մի քանի ստիւնե-  
ներ գովձեց, փորձեց ճշալ այն շան պէս, կադ-  
կանձիկ երկաթ, որ գիւղը զարթնի, բայց այդ  
էլ չ'աջողուեց. նորա ձայնը խեղդեց կոկորդի  
մէջ, աչքերը ուսան կարմրատակելով, բիրերը  
դուրս եղան իրանց բնից, շունչը կտրուեց, աչ-  
քերը լայն բացած նայեց աստղիկին, և վա-  
ղեց դէպի տուն. համարեա թէ ոյժով իրան  
չպրահեց շէմրից ներս, և բղաւեց... — Էլ դեզ  
չ'մնաց... էլ ճար չ'մնաց... բոլորը արի, Տի-  
րամէրը խոստացաւ փրկել գաւակիս բախտա-  
ւար ինձ, աստղը փայլում է, էլ վտանգ չ'կայ...



Գեռ չ'վերջացրած նա վազեց դէպի դուրս, նայեց աստղիկին, և դարձաւ տուն, տեղաւորեց հիւանդի զխաւերնը այս անգամ հանգիստ... րոպէն ցնցող էր, հիւանդը հոգևարքի մէջ— Մայր էր կանչում նա լսեց.— Ի՞նչ է ձէնիդ մատաղ, ուսերիս շէն... Սարգսր<sup>1)</sup> բալաս ինչ կուզես... բոլորը նրան նայեցին, խզճալին ցնգած է.— Տարէր դուրս թողէր չ'խանդարի— հրամայեց հէքիմբաջին, — ջուր ածէր գլխին... Գամարները բռնեցէր, խելքը գլխումը շի... Մինչ այդ պատանու մէջքին կճուճ էին դրել և արիւն առել, սաթըջամ է (մրսած) արիւնը կ'օգնի, մի ուրիշ կին հիւանդի պօրտն էր դցում տեղը, իսկ մի երրորդը վազեց գալլակ Պետրոսի յետևից.

— Ուստա Պետրոս չուն, հրամայեց հէքիմբաջին, — ոտերումը քամի կայ, շի կարողանում շարժել, դամարներից արիւն առ...

Փանգոտած ածիլին հեղինակաւոր վարպետը մի քանի անգամ քսեց դօտուն, սրեց... և ապա խրեց հիւանդի չորացած երակների մէջ... Մի ճիշ լուեց միայն, մի յուստհատ օգնութիւն աղերսող ճիշ, որ գալիս էր նոյնքան հիւանդ, և նուազ թոքերի խորքից: Մի կին այծի ճարպով գեռ հպում էր հիւանդի ու-

<sup>1)</sup> Փաշային լատուկ տիտղոս.

սերը, իսկ մի ուրիշը տաքացած ալիւսը բերաւ՝ դրաւ հիւանդի սառած ոտերի տակ, և սկսեց մածել...

Մայրը դուրս պրծաւ, որպու աղիողորմ ճիշը հասաւ նրա ականջին, և նա մի վայրենի քրքիջ արձակելով հասաւ որպու գլխաւերնը, նայեց վայրենի կատաղութեամբ որպէս արծիւը իւր սրսին, և կարծես հասկացաւ ամենայն ինչ... Գունատ դէմքի վերջին ցնցումները միայն նա տեսաւ, պատանին անշնչացած էր... Մի ոտսիւն արձակելով նա թռաւ դուրս, նայեց աստղիկին, որը կարծես կուում էր ամպերի հետ, նայեց, և յանկարծ իւր իսկ գլխաւերնում կարծես մի բան ճայթեց: Երկինքը իրար անցաւ արդեօք, թէ երկիրը շարժեց, դժմիկը բերանը բացաւ, թէ սանդարամետը դողաց, լուսինը խաւրեց արդեօք, թէ արեգակը ընկաւ... նա ոչինչ չ'տեսաւ, միայն այստանը իմացաւ որ, աստղիկը պահ մի թպրտաց' խեղդողի նման փայլիլեց, և ընկաւ առանց գիծ թողնելու... — Բալէս մեռաւ անուրմ հէքիմ, ասաց նա— Ախրը ջիւանիս բար աղջիկ էի որոնում որ կանաչ— կարմիր կապեմ քմութմա... Չէ ինձ ասացին դու ամենակարող ես, ինչու չօգնեցիր Լալիս... վառենում էիր վարձրդ կտրեմ, բալմմեռ... Լս ինչ բերիք գլխիս...





Լուսարեացիք, արագագիները կանչում էին, գիւղը դեռ աննշում էր. իսկ մինաւոր տնակից մերթ — ընդ մերթ լսում էր մի վայրենի աղաղակ — քարանձաւ Ստոււած... կուրանան Քո աչքերը..

Այն ինչ լուսիւները դեռ շարունակում էր, խաւարն աճաւոր էր և անթափանց, իսկ անոջորմ երկինքը կարծես անզգայ երկրի ցաւերին, անընդհատ ծիծաղում էր..



### Բ Ա Մ Տ Ա Ի Ա Ր Ը

7001  
3559

Ամառային երեկոներից մէկն էր. մէկը այն հագրագիւտ երեկոներից, որին կարելի էր սոսկ բանաստեղծական համարել. Երկինքը անամպ էր, ջինջ ու պայծառ. կապոյա Փօնի վրայ ատուկերը ծայլ — ծայլ պսպղում էին. յօգնած ճանապարհորդի նման խորա կարծես անքնութիւնից յորանջում էին, փայլփլելով մերթ պարզ, մերթ խաւար. Հեռաւոր հօրիզոնում ծով ուկիիանուսի միջից, լւսինը դուրս սողաց և սկսեց խորհրդաւոր քայլերով դիմել դէպի արևմուտք: Արանշելի տեսարան... խորհրդաւոր բնութիւն... լուս է ամեն ինչ, փողոցների անցու դարձը դադարել, մարդկային ձայնը վաղուց լռել է. միմիայն գործարանային խուլ դղրդիւնն է, որ խանդարում է բնութեան մե-



ուելութիւնը: Սև աշխատանք... Սև հաց... Սև-քաղաք... Սև մարդիկ... ահա բոլորը: Չնայած որ այդտեղ երկինքն էլ սև է լինում միշտ, բայց այդ օր արհեստական Սևութեան տեղի էր տուել երկնի բնական փայլը. երևում էր երկինքը, երևում էր լուսինը, երևում էին և աստղերը. հազադիւտ անասրան և սև-քաղաքի համար, որը շատ սակաւ է հանդիպում այդպիսի երեկոնների:

Մի ինչ որ միլիօնատէրի գործարանումն ենր, պտտենք այդ դժոխակը եթէ չէք ձոնձրանայ, ամենից առաջ դիմենք դէպի թշուառ բանւորի սև և կեղտոտ կազարմանները ահա նա, կազարման... Բանւորի ժամանակաւոր օթեանը. զուրկ ամեն ինչից, մինչև իսկ օդից... լոյսի... Մի ինչ որ տախտակի վրայ պառկած, կեղտոտ վերմակի տակ տնքում է մի հիւանդ. նորանից քիչ հեռու պառկած են մօտաւորապէս երեսուն—քառասուն բանւորներ, որոնց խորմփալը մի չ'տեսնւած դժօխային համերգ է յիշեցնում:

Հիւանդը ըստ երևոյթին բաւականին թաւաւած մի երիտասարդ է, ճակատի անվիրջ ծալքերով, նորա ոսկրոտ դէմքը կորցրել է իւր հրապոյրը, թէև ժամանակով հրապուրիչ է եղել նա: տնքոցը քանի գնում սաստկանում

է, նա վերմակի տակից հանեց իւր ոսկրոտ, և նոյնքան կեղտոտ ձեռքը, չփեց ճակատը, փոսընկած տչքերը, և մի օֆ քաշեց... նա չարչարելով շուռ եկաւ իւր աջ կողքի վրայ, և սկսեց երկչոտութեամբ ձայն տալ իւր մօտիկ ընկերոջ:

— Գէորգ — Գէորգ... .

Գէորգը չլսեց, նա մի անախորժ ձայն հանեց, շուռ եկաւ, և սկսեց նորից խորմփալ:

— Գէորգ — Գէորգ... նորից հնչեց հիւանդի չոր և միաժամանակ խեղդուող ձայնը. Գէորգը վեր կացաւ թոնթորալով և սկսեց մրթմրթալ.

— Տնաշէն ինչ է պատահել քեզ, չես թողնում որ քնենք, առաւօտուայ վեցին վախտի պիտի գնամ, մի սհաթ էլ չեմ քնել. ինչ պիտի անեմ դէ ասա, իսկ եթէ վախտում քնեմ... .

— Մի բարկանայ Գէորգ ջան մեռնում եմ, երկու խօսք պիտի ասեմ լսիր ինձ. ընդհատեց հմւանդը արտասուելով.

— Գու խօսքերդ իսկի չ'վերջացաւ տնաքանդ, ասես երեխայ լինի, չի էլ ամաշում դեռ լալիս է պատասխանեց Գէորգը.

— Վերջին լացըս է Գէորգ... վերջին արտասուքս...

— Ե՛հ բաւ է բաւ ընդհատեց Գէորգը,



ինչոր է ցաւում, դեզը խմեցիր, որ անում եմ մի աշխատիլ դարձեալ աշխատում ես, որ ինձ չես լսում ի հարկ է պիտի տանջես. — Ամեն տեղըս էլ ցաւում է, սաղ տեղ չունիմ Գէորգ, դեզը խմեցի... բայց չօգնեց... չաշխատել էլ չէի կարող ինչ անելի.

— Ինչո՞ւ չէիր կարգը... —

— Օրըս չէին դրում, աճա թէ ինչու... —

— Որ բժշկից թուղթ բերես կը գրեն, ինչպէս չեն գրել:

— Հէնց բանն էլ այդ է որ բժիշկը թուղթ չի տալիս... —

— Ինչպէս թէ թուղթ չի տալիս:

— Ստումէ հիւանդ չես... —

Այստեղ երկուսն էլ լռեցին, երկուսն էլ կանգ առան, երևի մտածելու մի ինչ որ բան կար բժիշկը թուղթ չի տալիս... Ստումէ հիւանդ չես... Եւ իրաւ, երկուսն էլ կարծես որոճում էին այդ կարճ, կտրակ, նոյնքան անբովանդակ նախադասութիւնը. նորա իրաւունք սննէին թող մտածեն, իսի բժիշկը, նա իւր օրանը լաւ գիտէ, նա հասկանում է թէ որ հիւանդին հարկաւոր է ինամբ պանիկ որին չէ, և այդպէս անվերջ: Փորը լսութիւնից յետոյ շարունակեց ընդհատաւ խօսակցութիւնը, առաջինը գէորգներ որ հարցրեց.

— Այսօր բանի օր է որ չես աշխատում Արամ.

— Այսօր հինգերորդ օրն է կարծեմ, պատասխանեց հիւանդը և շուտ հկաւ.

— Ի՞նչ կրեի մեխանիկին տեսնար, ինչ ասաց

— Տեսայ բարկացաւ, ասաց որ մեղ առողջ մարդիկ են հարկաւոր, հիւանդները մեղ հարկաւոր չեն գնայ:

— Իսկ տարելուն, այդ անիրաւին տեսնար, նա ինչ ասաց.

— Ե՛հ ինչ պիտի ասեր, նա էլ ասում է որ հայերը ծոյլ են, ամեն բան չեն տնում, երեսներին կանգնում մեր խօսքին պատասխանում են, համշարները լաւ են որ ինչ ասումես գլուխները քաշ կատարում են: Ախրը հայերին չեն սիրում է Գէորգ, շարունակեց նա— ինքը տարելին էլ հայ է, էն էլ տերտերի թու գէ որ հայերէն մի բաւ էլ չի գիտում ինչ անես... —

Խօսակցցութիւնը ընդհատուեց, դորձարանի սուրբներ որ զուժեց առաւօտեան ժամի վեցը: Գէորգը սթափուեց, նա շտափ— շտափ հազաւ վերնաշապիկը, առաւ գտակը, և առանց մի խօսք ասելու դուրս գնաց. նորա յետևից ամբողջ կնգարման դատարկեց, կարծես դը -



ժոխկի քուրայից նոր հանած սև ուրևականներ լինեն դոքա, որ կրկին անգամ գիմում են դէպի նոյն գժոխկը, դէպի մի կտոր անարգ հացի, նոյնքան ատելի գերեզմանը... Սև աշխարհի սև բնակիչներն էին դոքա, բազդի խորթ գաւակները, միշտ համր, և յուռ, մտածկոտ քնաւորութեամբ. կարծես այլոհոյով արբեցած՝ նոքա տատանելով դիմեցին դէպի գործարանային սև ժխորը, և անհայտացան միմիւր քառսի մէջ...

Առաւօտ էր, կազարման դատարկ. Արամը վեր կացաւ, տնքտնքալով դնաց «կուխին որ չայ դնի» ընկերը «գաւտրիկին» պիտի գայ, ապա ինչ պիտ իմի. և հենց այդ ժամին գրասենեակի ծառան ներս մտաւ.

— Արամ, քեզ կանտորում կառավարիչը կանչումէ

— Ի՞նչ է ասում

— Զ'գիտեմ ասումէ չուտ թող գայ

Արամը շփոթւեց, նա սկսեց մտածել — ախրը կառավարիչը ինչ գործ ունի ինձ հետ, այստեղ մի բան կայ շնչաց նա, և զնաց: Գրասենեակը դատարկ էր, բայց զարմանալին այն էր որ Դէորգն էլ այնտեղէր.

— Ի՞նչ կայ Գէորգ ջան

— Զեմ գիտում, մեխանիկը վախտից յետ

տուեց ինձ: ասաց դնա կանտոր բառչոտդ ստաց դու մեզ հարկաւոր չես.

— Ախոր ինչո՞ւ համար, չ'լինի ինձ էլ են ուզում բառչոտ (հաշիւ) տալ.

— Յապա ինչո՞ւ են կանչել այստեղ, խէր բանի համար չ'լինի... տեսնաս էլ «որի» բարեկամն է պարապ որ բերումէ մեր տեղը դնի էլի.

— Կանտորչիկի քրոջ տղան՝ ահա մի շաբաթ է որ պարապ լծիւ է գալիս չ'լինի քո տեղը պիտի դնեն, նա էլ «մատլօնչի» է

— Ի՞նչ գիտեմ մեկուկ նա է, ապա կառավարչի երկու բարեկամները որ սոված աղվէտի պէս աշքները պղզած, ամեն օր գործի են սպասում...

— Մեխանիկն էլ մի տօկառ է բերել, իսկ տելեֆօնչուն երեկ դուրս արին՝ խիմիկի բարեկամն էյիմի...

Երկուսն էլ լռեցին, և միաժամանակ երկու մարմիններ մէջրից ծալելով՝ զգակները բարձրացրին վերև. դա բանտրի բարենէր... որի մէջ կարգացումէր ամենայն ինչ, և վիշտ... և բողոք... և ստրկին յատուկ հնազանդութիւն և երկչոտութիւն...

Եկողը կանտորչիկնէր, որ զնաց բազմեց աթոռի վերայ, և խօսեց իւր դիրքին յատուկ տոնով.



— Հը եկե՛կ էք

— Հա աղա՛ն, դուք աղա՛ն

— Ի՛նչ մօտ եկե՛ք

Երկշտու թեամբ երկուսն էլ մօտեցան զրա-  
սեղանին

— Գրել գիտէ՞ք, հարցոյնց պարտնը

— Հա աղա՛ն, Գէորգը իր անունը գրել  
գիտի պատասխանեց Արամը

— Գէ վեր առ գրիչը, բռնիր այ էսպէս,  
և այստեղ գրի քո անունը և ֆամիլեատ. նա  
մատով ցոյց տուեց թէ որտեղ պիտի գրուէր:

Գէորգը առաւ գրիչը, թաթախեց թա-  
նաքի մէջ, չորս կողմը նայեց ուղղումէր խօսուլ,  
բայց ազան բարկացաւ

— Ետե՛ս արա սպասելու ժամանակ չէ:

— Գէ գրի գուրբան, ազին ինչո՞ւ կ'բար-  
կացնես մէջ ընկու Արամը — մեր ազնն ի,  
ինչ ասումէ արա, ինչ պիտի անենք, իրանք  
ողջ մ'անն. Գէորգը ջահելի աղան, ընկած գուրս  
եկած չի բաշխիր, մինչև էոր ձեր սաղազով

ապրել ենք ազա, դարձաւ նա պարտնին.  
— թողէ՛ք մինչև աշուն էլ է մ'անք, աշնանը  
մենք ինքներս կերթանք. բար ու ցանքսի տէր  
ենք, էստեղ խօ մշտական չենք մ'անայ. մի  
բիշ պարտք կայ, հարսանիքիս պարտքը, էն էլ

որ տայի, էլ որ էնպէս հար զիդրո կտրէիք  
էլ չէ՛չ Բարու չէի դայ, խաչ որ չէի դայ...  
Աղան Արամին չլուել ձեռքերեց, նա շա-  
րունակումէր հաշի շտակը շրթնակացնել, և մի-  
նևոյն ժամանակ գրել ինչ որ բան զբաղում  
ձեռքերով իրան:

— Ախրը ազա, էս ինչո՞ւ համար ի. վորը  
լու թիւնից յետոյ խօսեց Գէորգը, — դէ սհաթ  
իմ վախից ուշացել, էն էլ հիւանդին դեղ էի  
տալիս էս անգամ բաշխ. . .

— Ետե՛ս արա գրի՛ ես սչինչ չ'գիտեմ:  
երկու բարեկամներ մի դալօղում չի կարելի,  
կառավարիչն է հրամայել. . .

— Եւ նա գրեց — թէ իւր, և թէ ընկերօջ  
անուն և աղգանուծը:

— Բանի օր ես աշխատել Արամ:

— Զեմ պիտի աղա:

— Առ էս քեզ հինգ, էս էլ քեզ երկու  
բուրլի. դէ գնացէ՛ք շորներդ առէ՛ք եկէ՛ք գուրս  
զնացէ՛ք:

— Աղա, ախրը էսպէս հիւանդ ես հիմա  
սըր երթամ, էս դարիք տեղում հեր չ'կայ, մէր  
չ'կայ. . . Ծանաղարհածախս էլ չ'ունիս որ տուն  
գնամ տամ և հինգ օրու անն էլ խօ չէ՛ք տալիս. . .

— Ի՛նչ տասնհինգ օրան, ինչ ես երկար  
ու բարակ մանում, դիտէ՛ք որ կառավարիչը

որ տայի, էլ որ էնպէս հար զիդրո կտրէիք  
էլ չէ՛չ Բարու չէի դայ, խաչ որ չէի դայ...  
Աղան Արամին չլուել ձեռքերեց, նա շա-  
րունակումէր հաշի շտակը շրթնակացնել, և մի-  
նևոյն ժամանակ գրել ինչ որ բան զբաղում  
ձեռքերով իրան:

— Ախրը ազա, էս ինչո՞ւ համար ի. վորը  
լու թիւնից յետոյ խօսեց Գէորգը, — դէ սհաթ  
իմ վախից ուշացել, էն էլ հիւանդին դեղ էի  
տալիս էս անգամ բաշխ. . .

— Ետե՛ս արա գրի՛ ես սչինչ չ'գիտեմ:  
երկու բարեկամներ մի դալօղում չի կարելի,  
կառավարիչն է հրամայել. . .

— Եւ նա գրեց — թէ իւր, և թէ ընկերօջ  
անուն և աղգանուծը:

— Բանի օր ես աշխատել Արամ:

— Զեմ պիտի աղա:

— Առ էս քեզ հինգ, էս էլ քեզ երկու  
բուրլի. դէ գնացէ՛ք շորներդ առէ՛ք եկէ՛ք գուրս  
զնացէ՛ք:

— Աղա, ախրը էսպէս հիւանդ ես հիմա  
սըր երթամ, էս դարիք տեղում հեր չ'կայ, մէր  
չ'կայ. . . Ծանաղարհածախս էլ չ'ունիս որ տուն  
գնամ տամ և հինգ օրու անն էլ խօ չէ՛ք տալիս. . .

— Ի՛նչ տասնհինգ օրան, ինչ ես երկար  
ու բարակ մանում, դիտէ՛ք որ կառավարիչը



եթէ լսի, ձեզ երկուսիս էլ բռնել կ'տայ... Դէ գնացէք կորէք այստեղից թողնելով թող չե-  
րևայ շուտ... Ինչ հայրաններ են, խօսք չեն  
ուզում հասկանալ. վռնդեցէք դորանց, հրա-  
մայեց նա բարկացած:

Երկուսն էլ կուշ եկած կպան գրասենեա-  
կի պատին սպասելով կառավարչին. եկաւ և  
նա կառավարիչը, կուժքը դուրս ցցած, գլուխը  
բարձր բռնած, ձեռքի փայտը շարժելով երկու  
բանուորները մօտեցան:

— Այս ասրը մեզի ինչո՞ւ դուրս կանէր,  
խեղճ քիւֆաթատէր ենք, գլուխներս քաշ կ'աշ-  
խատենք, հիւանդ էլ ենք ապա դէ...

— Երկար խօսելու ժամանակ չէ, փող-  
ներդ ստացել էք գնացէք, մեզ այլևս հարկա-  
ւոր չէք:

— Այս վերև Աստուած, ներքև դու, էս-  
պէս հիւանդ ուր երթանք, ո՞վ կառնի մեզ-  
ախրը մեզ էսպէս հիւանդ չ'բռնեցիր, դէ թո-  
ղէք լաւան...:

— Դէ կորէք դուրս գնացէք ի՞նչ զահլա  
կ'տանէք, լսօ այստեղ անկեղանոց չէ. որ գա-  
ցուր գայ պառկի և փող ստանայ. կանչենէք  
դո՛նապանին թող դուրս վռնդի սրանց. ծամ-  
ծմած նախադասութիւնը բերաններումը մնաց,  
Լէզզի դո՛նապանը շլինքներին տալով դուրս

բերաւ «վարտից», խոկ խեղճերի անկողինը մի  
ինչ որ մշակ մէջքին առնելով, բերաւ դուրս  
փողոցի մէջ բանուորների մօտ, երկուսն էլ ձեռք-  
ները ծալած, վիզը ծուռ, նայումէին գործա-  
բանի դարպասին որից այլ ևս անկարելի էր  
անցնել, և միաժամանակ երկուսի կրծքից էլ  
դուրս թռաւ մի յուսահատ ճիշ:

— Քօռաննս ֆալնգ... ծառայութիւնն  
էսպէսի հն Գէորգ. ծառայութեան վերջ էսի  
հն կասես, դէ քէլի մատաղ, քէլի էթանք. հա-  
պա էս դավողը էն կառավարչին պիտի մնայ,  
չէ կասես ծառայութեան վերջը էսի եկ, դէ  
խօսի լիզլիզ մատաղ, աոս, աոս որ էն էլ  
դուրս կ'գայ...

— Հա Արամ, էն էլ դուրս կ'գայ, ֆալա-  
զը ամեն տեղ կայ, էնոր էլ կ'խփի ինչո՞ւ  
կ'շտափիս...

— Չէ Գէորգ, նա բախտաւորի, նորան  
ֆալազը մօտ չի գա, նա կառտարիչի չէ էն-  
որ էլ դուրս կանի...

— Հա Արամ, տեսնը ինչպէս ոտը գետ-  
նին խիեց, ВОНЪ, ВОНЪ ասաց, ասրը ֆալազը  
ВОН-ից կ'վախենայ չէ, էն որ մօտ չի գա՞յ...

— Հա Գէորգ, էնոր մօտ չի գա՞յ. կառա-  
վարիչի քէֆը էգպէս ուզեց, ֆալանգն էլ ВОН-ից  
կ'վախնայ... ծառայութեան վերջն էլ էսի, դէ



ասա լիմա ուր երթանք, լեզու էր չգիտենք,  
եաման ինչ անենք...

Գարձեալ երեկոյ էր. Մի ինչ որ գործա-  
րանի հանգէպ երկու բանւորներ, վիզները  
ծուռ՝ առաւօտից մինչև երեկոյ սպասումէին.  
Նորանցից մէկը փաթաթած կելտտոտ վերմա-  
կի մէջ, տնրում էր անդադար:

Գարպատի ծառան չէր թողնում խեղճերին  
ներս մտնել, իսկ բանւորները ստիպւած էին  
այդ օր մինչև երեկոյ մի կտոր թրբի հաց ծա-  
մելով սպասել կառավարչին:

— Սպասելը իզուրէ Գէորգ, նա էլ չի գայ,  
էթանք մի տեղ գտնենք գիշերելու համար. Գէ-  
որգը գլուխը օրօրեց, յետ ու առաջ գնաց, մոր-  
թէ փափազը առաւ և մտաւ դարպասի «բութկան»:

Գոնապանը բարկացաւ, հայհոյեց մի քա-  
նի անգամ, կարծես կառավարիչ լինելը «գործ  
չ'կայ» հայերին այստեղ չեն ընդունում ասաց,  
և դուրս վռնդեց...

— Արամ, էտեղ հայերին չեն ընդու-  
նում, էտեղ էլ գործ չ'կայ. մի ուրիշ տեղիւ  
միխանիկը իւր բարեկամներն է պահում, իսկ  
մի երրորդ տեղ համշարին աւելի գին ունի  
քան թէ մենք, որովհետ նրանք խոնարհ են,  
մենք բա ուր երթանք դուրբան...

Մինչ այսպէս խօսումէին Աբարանցի բան-  
ւորները, այն ինչ երեկոն հասնում էր իւր  
վախճանին, աստղերը սկսեցին նորից պճպճալ,  
լուսինը բռնեց իւր խորհրդաւոր ընթացքը  
բնութեան պարը տմենուրէք էր, գիշերը յու-  
զիչ էր և բանաստեղծական...





Die in der K...  
 ...  
 ...  
 ...  
 ...  
 ...

(Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page)

||

||

(Faint, illegible text at the bottom right of the page)



« Ազգային գրադարան



NL0360228



51709